0001, Երևան, Հայաստան
Նալբանդյան 106/1, Սայաթ-Նովա
բիզնես կենտրոն
Հեռախոս՝ +374 44 20 20 48
Էլ. հասցե՝ info@mediafactory.am
Կայք՝ mediafactory.am

MEDIA FACTORY HETQ

0001, Yerevan,Armenia
106/1 Nalbandyan Sayat-Nova
Business Center
Phone: +374 44 20 20 48
E-mail: info@mediafactory.am
Website: mediafactory.am

ք. Երևան 7 նոյեմբեր, 2022 թ.

Գեղարքունիքի մարզի
մազպետ Կարեն Սարգսյանին

Հարցում

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Հետք մեդիա գործարանը հոդված է պատրաստում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերաբերյալ:

Ըստ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վարդենիս, Ծողակաթ համայնքներում սահմանամերձ են համարվում հետևյալ բնակավայրերը՝

- **Ճամբարակ**
- գյուղ Վահան
- գյուղ Թթուջուր
- քաղաք Ճամբարակ
- **Վարդենիս**
- գյուղ Կուտական,
- գյուղ Սոթք,
- գյուղ Վերին Ծորժա,
- գյուղ Ներքին Ծորժա,
- գյուղ Փամբակ,
- գյուղ Դարանակ,
- գյուղ Գեղամասար,
- գյուղ Ավազան,
- գյուղ Արփունք,
- գյուղ Նորաբակ,
- գյուղ Կութ,
- գյուղ Արեգունի,
- գյուղ Կախակն,

- գյուղ Տրետուք,
- գյուղ Ծատվան,
- քաղաք Վարդենիս
- **Շողակաթ**
- գյուղ Արտանիշ
- գյուղ Ջիլ
- գյուղ Ծափաթաղ

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. **Ըստ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների մասին ձեռնարկի՝**
   Ապաստարանը - թշնամու կողմից բոլոր տեսակի խոցման միջոցների կիրառման կամ ճառագայթային, քիմիական, մանրէաբանական խոցման գործոններով վթարների և աղետների պայմաններում առանց անհատական պաշտպանական միջոցների մարդկանց երկարատև մնալու համար հարմարեցված, կամ կառուցված ամուր (սովորաբար՝ խորացված), հերմետիկ կառույց է: **Ապաստարանները սարքավորվում են նախամուտքով, օդազտիչ, օդամղիչ սարքավորումներով, ջերմային և լուսային սարքերով, մահճակալներով, ջրամատակարարման ու կոյուղու համակարգերով:**
   1.1. Վերոնշյալ նորմերին համապատասխանող քանի՞ ապաստարան կա **վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում**:
   1.2. Որքա՞ն է կազմում վերոնշյալ նորմերին համապատասխանող ապաստարանների ընդհանուր մակերեսը **վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրի** համար:

2.
   2.1. Վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պատսպարման համար նախատեսված քանի՞ հարմարեցված նկուղային տարածք կա, որը վերահսկվում է մարզպետարանի կողմից:
   2.2 **Վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում** արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պատսպարման համար նախատեսված, հարմարեցված նկուղային տարածքի ընդհանուր մակերեսը որքա՞ն է կազմում:
3. Խնդրում ենք տրամադրել **վերոնշյալ ցանկի յուրաքանչուր բնակավայրում** գտնվող առնվազն մեկ ապաստարանի հասցե:
4. Ըստ բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին որոշման՝ պաշտպանական կառույցներում բնակիչները տեղավորվում են

կազմակերպված և արագ՝ կառույցի պարետի (ավագի) ցուցումով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք տրամադրել՝ **վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր համայնքի** պարետի (ավագի) կոնտակտային տվյալները (անուն-ազգանուն, հեռախոսահամար, զբաղեցրած պաշտոն):

5. 2017-ի տարեսկզբից մինչև 2022-ի նոյեմբերի 7-ը **վերոնշյալ յուրաքանչյուր համայնքում** ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվել՝ մասնավորապես սանիտարահիգենիկ և ինժեներատեխնիկական պայմանների բարեկարգումը:
6. **Վերոնշյալ յուրաքանչյուր համայնքում** քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների բարեկարգման ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել վերջին ակտիվ ռազմական գործողություններից (սեպտեմբերի 13-15) հետո մինչ օրս՝ համաձայն ՀՀ ԱԻՆ հանձնարարականի:

Հոդվածը հրապարակվելու է Հետք մեդիա գործարանի կայքում եւ Հետք ինտերնետային թերթում:

Հարգանքով՝
Սվետլանա Մովսիսյան, Հետք Մեդիա Գործարանի ուսանող-լրագրող
Հեռախոսահամար՝ 096252093